խարատունն անուանեալ երիւք քարաշէն սենեկօք, որոց միջին յ'12 խորշս զատուցեալ է նոյնքան սեամբք և նուրբ և խիտ քանդակօք, այլ գմբէթ նորա անկեալ է. և է սա շինեալ յամին 1209, ունի արձանագիրս յոլովս. վայելուչ է և տապանատունն Ճոխութեամբ քարակերտ շինուածոց և խաչարձանաց, ունելով և մատուռս երիս 'ի վերայ իւր. գոն և այլ մատուռնք հուսկ և հեռի և իջևանատեղի մեծ որմափակ, այլ կործանեալ: Նորոգեալ է վանացս յամին 1685 և 1788 և դարձեալ լքեալ, և միւսանգամ 'ի հերուն (1852) ձեռն արկեալ եղև 'ի նորոգումն: — Սակաւուք հեռի 'ի հիւսիսոյ վանացն կայ Ս. Գէորգ եկեղեցի վայելուչ շինութեամբ և արձանագրաւ Գագկայ Ա, և մերձ նմին այլ եկեղեցի փոքր՝ նման նմին անսիւն բարձրագմբէթ, յորում գոյ և արձանագիր ՆԼԵ (986) թուականաւ. և այլ մատուռնք և փլած եկեղեցիք. որք թուին 'ի յիշատակ հանգստարանի թագաւորաց շինեալք, զի 'ի սնարս եկեղեցւոյ Ս. Գէորգայ կայ շիրիմ մակագրեալ ԱՀՈՏ ԹԱԳԱՒՈՐ, և կից նմին այլ շիրիմ անգիր: — Սակաւուք ևս 'ի բացեայ ըստ արևելից հիւսիսոյ՝ կայ Տ՞ՅԼԷ գիւղ՝ յերից կողմանց պատեալ յԱխուրեան գետոյ և միւսոմն՝ պարսպօք ամրացեալ. ունի եկեղեցի հին, յորոյ գրանն վերայ քանդակք առիւծուց նստաստակ 'ի միջի ունելով:

41. Յարևմտից Անւոյ Ժամաւ հեռի կայ ՂՕՂԼԷՃԱ գեօղ, որ է հինն Բագնայր, կանգուն ունելով զփառահեղ և մեծավայելուչ եկեղեցին շինեալ 'ի Սմբատայ Մագիստրոսէ յամին 1010, անսիւն գմբեթաւ և լայն սիւնազարդ գաւիթաւ, լի և հոծ արձանագրութեամբք և դրուագօք. 'ի հարաւոյ արևելից տաճարին կան զոյգ մատուռնք փոքունք, մին յանուն Ս. Լուսաւորչին, և 'ի միւսումն՝ շիրիմ անգիր:

Կիսաժամաւ 'ի հարաւոյ ՂՕՂԼԷՃայ՝ կայ ԱԼՃԱ գիւղ, որ է ԱԲԼՕՅ-ԱՒԷՃ, և 'ի նմա մնացուածք մենաստանի և եկեղեցւոյ նման Բագնայրի և մատրանց՝ կործանելոց իբր տասն կամ 12 ամաւ յառաջ: — Իսկ 'ի հիւսիսոյ ՂՕՂԼԷՃայ ժամաւ և աւելի հեռի կայ հինն ՄԷՆ գիւղ՝ Գաբաղաղ կոչեցեալ այժմ վասն այգեացն շատութեան, որք և յարձանսն յիշին. 'ի մնացուածս շինուածոցն կանգուն կայ հոյակապ տաճարն կառուցեալ 'ի Դաւթայ Սահառունոյ յամին 614, որով մի 'ի հնագունից եկեղեցեաց է, և մեծագոյն քան զյոլովս որ զվայրօքս, վեհակերպ և մեծագմբէթ, և պատկերաց քանդակաց պըՃնեալ արտաքուստ. արձանագիր կառուցողին չև ևս ընթերցաւ, որպէս և ոչ ապարանիցն խանդարելոց, որ զբօսանաց վայր էր Բագրատունեաց. կան և շիրիմք ոչ սակաւք անգանօր: — Ի հարաւոյ Մրենոյ մերձ յԱխուրեանն կան աւերակք Բագարան աւանի, զոր շինեաց Երուանդ Արշակունի, տեղի դից պաշտամանց, երևին և մնացուածք եկեղեցեաց 'ի դերբուկսն անդ, իսկ դաստակերտի նորին ԵՐՈՒԱՆԴԱՇԱՏայ աւերակք նշմարին յանկեան խառնիրդոց գետոյն ընդ Երասխայ: — Յարևմտից Մրենայ կայ ԱԼԷՄ կամ ԱԼՄԱՆ գիւղ պարսկաբնակ. և սա ունի եկեղեցի գմբեթաւոր շինեալ յամին



Աշտարակ և մզկիթ յԱնի. — La mosquée d'Ani.